

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթներ է իրականացնում լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Ակադեմիայի ղեկավարը:

4. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Ակադեմիայի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. Բաժինն Ակադեմիայի ղեկավարի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների հետ:

6. Բաժնի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, Ակադեմիայի ղեկավարի հրամաններով և այլ իրավական ակտերով:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) ապահովել հանրային ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման, նոր գիտելիքների յուրացման, կառավարչական հմտությունների կատարելագործման, տեսական և գործնական գիտելիքների ինտեգրման նպատակով վերապատրաստման և որակավորման բարձրացման մարտավարական և ռազմավարական ծրագրերի մշակումն ու իրականացումը,

2) որոշել վերապատրաստման արդյունավետ իրականացման համար առկա խնդիրները, դասընթացների կազմակերպման հիմնական ուղղություններն ու սկզբունքները,

3) նպաստել Ակադեմիայում հանրային ծառայողների վերապատրաստումն արդյունավետ իրականացնելու համար իրական նախադրյալների ստեղծմանը,

4) աջակցել հանրային ծառայողների վերապատրաստման կարիքների բացահայտման, դասընթացների արդյունքների մշտադիտարկման (մոնիտորինգի) և արդյունավետության գնահատման, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գիտական հենքի ստեղծմանը,

5) նպաստել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից վարվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը,

6) լուսաբանել համակարգի հիմնական հայեցակարգերը, սկզբունքներն ու գործառույթները, որոշումների ընդունման և կառավարչական ժամանակակից մեթոդները,

7) ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ մշակել և իրականացնել ծրագրեր՝ ներկայացնելով համակարգում իրականացվող քաղաքականության իրավական հիմքերը, զարգացման ռազմավարական հիմնահարցերը,

8) աջակցել ծառայությունների մատուցման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների անձնակազմի մասնագիտական գիտելիքների և

հմտությունների, ինչպես նաև իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության աստիճանի բարձրացմանը և այլն:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Բաժնի հիմնական գործառույթը հանրային ծառայողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքական, քաղաքացիական, հայեցողական պաշտոններ զբաղեցնողների և աշխատողների, ինչպես նաև մասնավոր հատվածի աշխատողների և այլ անձանց վերապատրաստում իրականացնելն է և լրացուցիչ կրթական ծրագրեր մշակելը: Բաժինը վերապատրաստում և որակավորման բարձրացում է իրականացնում մասնավորապես հետևյալ ուղղություններով.

1) հանրային ծառայության համակարգի և հիմնախնդիրների լուծման ուղղությամբ քաղաքականության արդյունավետության հետ կապված հիմնահարցեր,

2) ֆինանսների կառավարման հիմնախնդիրներ,

3) արդյունավետ կառավարման տեխնոլոգիաներ,

4) կոռուպցիայի կանխարգելման հարցեր,

5) անձնային և կառավարչական ունակությունների զարգացման հետ կապված հիմնահարցեր,

6) շուկայի ուսումնասիրության կամ պատվիրատուի կարիքի գնահատման կամ նրա կարիքի ինքնագնահատման արդյունքների հիման վրա կամ առաջարկով նաև այլ հիմնախնդիրներ:

9. Բաժինը կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում մասնակցում է՝

1) մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացմանն ուղղված մարտավարական և ռազմավարական ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքներին,

2) վերապատրաստում անցած հանրային ծառայողի վերապատրաստման արդյունքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման մեխանիզմների սահմանման աշխատանքներին,

3) վերապատրաստման դասընթացների ծրագրերի մշակման և հետագա բարելավման աշխատանքներին՝ ելնելով հանրային ծառայողների կարիքների գնահատումից և մասնագիտական (պաշտոնեական) պարտականություններից,

4) վերապատրաստման դասընթացների որակի և արդյունքների գնահատման աշխատանքներին,

5) վերապատրաստման դասընթացների կազմակերպման նպատակներով համապատասխան ուսումնական պլանների և ծրագրերի մշակման աշխատանքներին,

6) հանրային ծառայության ոլորտի համակարգման և ծառայությունների մատուցման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների մեթոդական կարողությունների հզորացմանն ուղղված ծրագրերին,

7) բնակչության իրազեկության աստիճանի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

8) ոլորտի համակարգման և ծառայությունների մատուցման գործառույթներ իրականացնող կազմակերպություններին մեթոդական, տեղեկատվական և խորհրդատվական նյութերի տրամադրման աշխատանքներին,

9) հանրային ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացմանն ուղղությամբ իրականացվելիք ռազմավարությունների, հայեցակարգերի, նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին,

10) Ակադեմիայի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքներին:

10. Բաժինն իրականացնում է՝

1) կրթության և ուսուցման ժամանակակից արդյունավետ մեթոդների ուսումնասիրություն,

2) ուսումնառության գործընթացի անընդհատության, հրապարակայնության, ունկնդիրների մասնագիտական և որակավորման բարձրացման, նրանց աշխատանքային հմտությունների կատարելագործման ապահովում,

3) լրացուցիչ կրթության մեթոդաբանության վերաբերյալ հետազոտական աշխատանքների իրականացում, վերապատրաստման ծրագրերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, խորհրդատվության տրամադրում,

4) լրացուցիչ կրթության ոլորտում ուսումնական հաստատությունների աշխատանքի դրական փորձի, ուսուցման առաջավոր տեխնոլոգիաների և միջոցների ուսումնասիրություն և կիրառում,

5) ուսումնամեթոդական նյութերի մշակում, ուսուցման նոր մեթոդների և միջոցների ներդրում, այդ հարցերով խորհրդատվության մատուցում,

6) լրացուցիչ կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողության իրականացում,

7) լրացուցիչ կրթության և որակավորման բարձրացման գործընթացին վերաբերող Ակադեմիայի ընթացակարգերի մշակում,

8) վերապատրաստման դասընթացների անցկացման նպատակով դասախոսների և փորձագետների հրավիրում և աջակցություն ցուցաբերում համապատասխան պայմանագրերի կնքման գործընթացի հարցում,

9) ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում (այդ թվում՝ հեռավար ուսուցման համակարգի կիրառում),

10) ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,

11) ուսուցման որակի և արդյունավետության վերաբերյալ ունկնդիրների հարցումների կազմակերպում և վերլուծություն,

12) ընթացիկ և տարեկան ծրագրերի ու հաշվետվությունների նախապատրաստում,

13) վերապատրաստման ծրագրերի, դասախոսների և ունկնդիրների վերաբերյալ տեղեկատվական համապարփակ բազայի ստեղծում, նորացում և վերլուծություն,

14) Բաժնի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային ծրագրերի մշակում,

15) Ակադեմիայի կանոնադրության համաձայն (ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում)՝ բնակչության վերապատրաստման և նրանց որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում,

16) Ակադեմիայի կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Բաժնի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի ղեկավարը:

12. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից:

13. Բաժնի պետը հաշվետու է Ակադեմիայի ռեկտորին, լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտորին:

14. Իր գործունեության ընթացքում Բաժնի պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, Ակադեմիայի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, Բաժնի պետի պաշտոնի անձնագրով:

15. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի՝ սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացման համար:

V. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

16. Բաժնի աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանում է Ակադեմիայի ռեկտորը:

17. Բաժնի աշխատողների գործառույթները, մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատողների աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:

18. Անհրաժեշտությունից ելնելով՝ Բաժնի պետի առաջարկությամբ ռեկտորի կողմից Բաժնի կանոնադրական խնդիրների լուծման համար ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: